## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 4)**

23 մարտի 2012թ. ժամը $15^{00}$

1. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի «Վաչիկ Եղիազարյանի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» ծրագրի մասին:
(Արման Գրիգորյան)

2. «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» ծրագրի մասին:
(Ժակլին Հեքիմյան)

3. «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակարաններ» ծրագրի մասին:
(Աշոտ Աբրահամյան)

### 4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

4.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր N 1):

4.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

### 5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):



5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Արմենակ և Աննա Թադևոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ):

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ մարտի 2012 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ «ՎԱՉԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ, «ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ԵՎ «ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի -ի N -12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի մարտի -ի N -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2200800 դրամ ընդհանուր արժողությամբ «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի «Վաչիկ Եղիազարյանի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆրիգեյթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06935506) 2012 թվականի հունվարի 31-ին կնքված՝ N WVA/APAR/IT-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների և հարակից սարքավորումների մատակարարում՝ 2200800 դրամի չափով, առանց



ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Skopun
Ա 22.2012թ.

**«Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի և Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի համար»**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նպաստել Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տեխնիկական պայմանների բարելավմանը՝ մատակարարելով համակարգիչներ՝ ուսման պայմանները բարելավելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող զրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը, Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը:<br><br>Բնագավառ՝ կրթություն |
| 6 | Ծրագրի ընդհանուր արժեքը | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2 200 800 (երկու միլիոն երկու հարյուր հազար ութ հարյուր) դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը, Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը: |
| 8 | Ծրագրի իրականացման ժամկետները | փետրվարի 10 – ապրիլի 10, 2012թ. |

| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում, սույն թվականի փետրվար – մարտ ամիսներին Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ին (3 հատ), Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ին (5 հատ) և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ին (4 հատ) տեխնիկական պայմանների բարելավման համար:<br>Մատակարարվող համակարգիչների ընդհանուր արժեքը կազմում է 2 200 800 (երկու միլիոն երկու հարյուր հազար ութ հարյուր) դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Համակարգիչների մատակարարումն իրականացնելու նպատակով մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել "Ֆրիգեյթ" ՍՊԸ-ի հետ՝ 2 200 800 (երկու միլիոն երկու հարյուր հազար ութ հարյուր) դրամ ընդհանուր արժողությամբ:<br>Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են:<br>Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ (3 հատ), Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ (5 հատ) և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ (4 հատ): |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների / Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի հետ համատեղ: |
| 13 | Ծրագրի ... վերահսկողության ... միջոցները | Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային զարգացման համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ծրագրի ղեկավար՝

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ապարանի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար

Ար. 4/1

Ար. 4/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

N 4/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.03.2012թ. № 3/3.8-1/2768-12

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.03.12թ. N 15/15.6/3007-12 գրության՝ կապված <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող <<Համակարգիչների մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի <<Վաչիկ Եղիազարյանի անվան N 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ին, <<Համբարձում Ոսկանյանի անվան N 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ին և <<Վարդենուտի միջնակարգ դպրոց>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք որ, հաշվի առնելով ներկայացված ծրագրի վերջնաժամկետը՝ ծրագիրն անընդունելի ենք համարում:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/6136-12
13.03.2012թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ N 4/1
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

N 02/1403-12
12.03.2012թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. մարտի 6-ի**
**15/15.6/3007-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի «Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/6112-12
12.03.2012թ.

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

**DEPUTY MINISTER**

ձ-4/1

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/2288-12 " 07 " 03 2012

*ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մարտի 6-ի №15/15.6/3007-12 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի «Վաչիկ Եղիազարյանի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝*** ***Մ.ՄԿՐՏՉՅԱՆ***

031/5965-12
12.03.2012թ.

*կատ. Ն.Սահակյան
հեռ. 524777*

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

ձ-4/1

№ 3/3-4/1957-12
07.03.2012թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.03.2012թ. թիվ 15/15.6/3007-12 գրությանը կից ներկայացված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի «Վաչիկ Եղիազարյանի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/5905-12
07.03.2012թ.

մ. 4/1

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի «Վաչիկ Եղիազարյանի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ | |
| հաշվի առնելով ներկայացված ծրագրի վերջնաժամկետը՝ ծրագիրն անընդունելի ենք համարում | Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: |

---

World Vision

մ. 4/1


Վորլդ Վիժն Հայաստան
Ազգային գրասենյակ
Ռոմանոս Մելիքյան 1
Երեւան, 0065, ՀՀ
Հեռ.՝ 374 10 749 118, 749 119
Ֆաքս՝ 374 10 749 148
www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

Armenia
National Office
R. Melikyan 1, Malatia-Sebastia
Yerevan 0065, Armenia
tel: 374 10 749 118, 749 119
fax: 374 10 749 148
www.wvarmenia.am
http://meero.worldvision.org


ՀՀ Կառավարության Բարեգործական
Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի
Նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Մարտի 22, 2012թ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան ՀՀ Ֆինանսների Նախարարության՝ 2012 թվականի մարտի 12-ի 3/3.8-1/2768-12 գրությամբ ներկայացված կարծիքին, կից Ձեզ եմ ուղղարկում «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ապարանի տարածքային զարգացման ծրագրի «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վաչիկ Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, Ապարանի Համբարձում Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի և Վարդենուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի համար» բարեգործական ծրագրի լրամշակված տարբերակը:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքներով՝

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջ.
Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Գրահամ Սթրոնգ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք թիվ 09/7379
«22» 03 2012թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**մարտի 2012 թվականի N Մ - - Ա** 4/2

**քաղ. Երևան**

**«ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՕՐԴԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի -ի N , Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N 3/3-6/-12, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի մարտի -ի N , Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի մարտի -ի N և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մարտի –ի N եզրակացությունները, ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 491100 եվրոին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն խոցելի խմբերին» բարեգործական ծրագիրը» (կցվում է ):

2. Առաջարկել «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամին նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի և Շիրակի մարզպետներին:

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում»ԲՀ տնօրեն Ժակլին Հեքիմյանի կողմից

«22» մարտի 20 12 թ.

4/2

«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում»ԲՀ հասցեյով բեռների ներմուծման ծրագիր
Աջակցություն Խոցելի Խմբերին

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Համրապետության Շիրակի, Տավուշի և Լոռու մարզերի,մասնավորապես ք. Սպիտակ բժշկական, կրթական հաստատություններին և նախակրթարաններին, հաշմանդամներին և բնակչության առավել խոցելի խմբերին, ՀՀ բժշկական հաստատություններին սարքավորումներով հագեցում և վերազինում՝ սոցիալ-առողջապահական: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով ակնկալվում են հարկային և մաքսային արտոնություններ: |
| 3. | Բարեգործ | Ֆրանսիայի "Երուսաղեմի Սուրբ Ղազարի Օրդենը"<br>Հասցեն – Ֆրանսիա, Մարսել13008, Ավենյու դե Տրայա 6<br><br>Գերմանիայի "GLOBAL AID NETWORK " ("GAIN") ("Գլոբալ օգնության ցանց"):<br>Հասցեն – Գերմանիա, AM Անտերեն Ռեյն 2, Գիսսեն D - 35394<br><br>Գերմանիայի "Հայաստան" կազմակերպություն<br>Հասցեն – Գերմանիա, ք. Էրլանգեն |
| 4. | Ծրագրի կատարողը | «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում»ԲՀ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Մր 4/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.03.12թ. № 3/3.8-2/3384-12

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.03.2012թ. N15/15.2/3733-12 գրությամբ ներկայացված «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծին կից ներկայացված ծրագրում բացակայում է յուրաքանչյուր տարի ներմուծվող բեռների ցանկը և արժեքները:

Միաժամանակ անհասկանալի է ծրագրի 10-րդ կետով նախատեսվող տարեկան 2 ուղևորաբեռնատար մեքենաների ներմուծման անհրաժեշտությունը, այն դեպքում, երբ ծրագրի իրականացման տևողությունը ընդամենը 3 տարի է:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդյան, հեռ. 595-227

039/7278-12

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Մր 4/2

« 22 » 03 2012 թ. N ՖԲ/ԱՀՆ-5/1945-12

Ձեր 2012-03-20, 15/15.2/3733-12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» բարեգործական ծրագիրը» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.56-34-91

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

040/7359-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

21.03.12թ.

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 20-ի համար 15/15.2/3733-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» բարեգործական ծրագրի» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել ծրագրի 10-րդ և 11-րդ կետերը, մասնավորապես՝ 10-րդ կետում նշել ձեռք բերվող ապրանքների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը, իսկ 11-րդ կետում՝ նշել ծրագրի իրականացման հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ ներմուծվող մեքենաների քանակը, նախատեսվող գինը և օգտագործման նպատակը:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 22 >> 03 2012թ.
N: 01/1156-12

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 20.03.2012թ.
թիվ՝ 15/15.2/3733-12

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» ծրագրի մասին>> որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում » ԲՀ կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» ծրագրի մասին» նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| ... ծրագրում բացակայում է ներմուծվող բեռների ցանկը և արժեքը, միաժամանակ անհասկանալի է 10-րդ կետի տարեկան երկու մեքենայի ներմուծման անհրաժեշտությունը: | Դիտողությունն հաշվի է առնված, խմբագրված ծրագիրը կցվում է, իսկ ավտոմեքենա ներմուծվելու է 2 հատ ծրագրի իրականացման համար: |
| **ՀՀ ՊԵԿ-ի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| ... հստակեցնել ծրագրի 10-րդ կետը ապրանքների նկարագիրը, ծավալը և գինը.<br>...ծրագրի 11-րդ կետում հստակեցնել ծրագրային ծախսերը և մեքենաների քանակը գինը և նպատակը: | Դիտողությունն հաշվի է առնված, խմբագրված ծրագիրը կցվում է: |

№ 4/2

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**մարտի 2012 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

№ 4/3

# «ԱՐՇԱՎԻՐ ԵՎ ՊԱՅԾԱՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի -ի N -12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի մարտի -ի N եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 15500000 դրամ ընդհանուր արժեքով «Բնակարաններ» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի ը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառա-վարության բարեգործ¬ծական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմա-կերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից

Գործադիր տնօրեն՝ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ________

«21» մարտ 2012թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բնակարաններ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Երևան քաղաքում ապրող փախստականներին բնակարանի անհատույց տրամադրում /սոցիալական/: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ /հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա, ՀՎՀՀ 08906104/: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ /հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա, ՀՎՀՀ 08906104/: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն,Երևան քաղաքի Բաբաջանյան փող.38 և 39 շենքի բնակարանների անհատույց տրամադրում նույն շենքում բնակվող փախստականներին /սոցիալական/: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 16.000.000,0 /տասնվեց միլիոն / ՀՀ դրամ,որը բաղկացած է նվիրատվության ենթակա 8 բնակարանների արժեքից 15.500.000 ՀՀ դրամից և կազմակերպչական ծախսեր 500.000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևան քաղաքի Բաբաջանյան փող. 38 և 39 շենքերում բնակվող փախստականներ, որոնց կազմը ներկայացված է սույն ծրագրին կից /սոցիալական/: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | ծրագրի սկիզբը 2012թ.-ի ապրիլից մինչև 2013թ.-ի մայիսը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Բնակարանների նվիրատվության պայմանագրի կնքում՝ նոտարական վավերացում: Ծրագրի իրականացում 2012թ.-ի ապրիլից մինչև 2013թ.-ի մայիսը: |
| 10. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր միգրացիոն պետական ծառայության կողմից ներկայացված փախստականների ցանկի և դիմումների հիման վրա 8 բնակարանների նվիրատվության իրականացում 15.500.000,0 ՀՀդրամ արժեքով և կազմակերպչական ծախսեր 500.000,0 ՀՀ դրամ : |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Պայմանագրերի նոտարական վավերացման համար անհրաժեշտ փաստաթղթերի, պետական տուրքերի և այլ պարտադիր վճարները, նոտարական վավերացման և այլ կազմակերպական ծախսերը կազմելու են մինչև 500.000ՀՀ դրամի: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր միգրացիոն պետական ծառայության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրի համակարգման հանձնաժողովի կողմից: |

284/3

# Տեղեկություններ

Բաբաջանյան թիվ 38 և 39 շենքերում բնակվող այն փախստական ընտանիքների մասին, ովքեր դիմել են իրենց զբաղեցրած բնակարանները /սենյակների/ անհատույց սեփականաշնորհելու համար

| հ/հ | Ազգանուն,անուն | բնակարանների /սենյակների/ համարները | բնակարաններու /սենյակներում/ բնակվող անձանց թիվը |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան Սվետլանա | 302,303 | 3 |
| 2 | Ծատուրյան Էմմա | 701 | 2 |
| 3 | Աբրահամյան Գրետա | 309 | 2 |
| 4 | Գազարովա Սվետլանա | 717 | 2 |
| 5 | Պողոսովա Լիանա | 300 | 4 |
| 6 | Աբրահամյան Ռաիսա | 203 | 1 |
| 7 | Գրիգորյան Արթուր | 204 | 4 |

«ԱՐՇԱՎԻՐ ԵՎ ՊԱՅԾԱՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

________ № ________

Ձեր № ________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.03.12թ. N 15/15.2/3165-12 գրության՝ կապված <<Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<Բնակարաններ>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել ծրագրի իրականացման սկզբնաժամկետը, ծրագրում առկա է ծրագրի կետերի անվանումների անհամապատասխանություն:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. մարտի 12-ի**
**15/15.2/3165-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակարաններ» ծրագրի 10-րդ կետն անհրաժեշտ է հստակեցնել, մասնավորապես՝ նշել, թե ինչ կազմակերպական ծախսերի մասին է խոսքը:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ան 4/3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.03.2012թ. թիվ 15/15.2/3165-12 գրությանը կից ներկայացված «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակարաններ» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրից պարզ չէ, թե ինչ նպատակով է ծախսվելու ծրագրի 15.500.000 դրամ բյուջեն: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ծրագրի 12-րդ կետում նշված տեքստի փոխարեն ներկայացնել այն գործարքները, որոնց համար ակնկալվում է ստանալ հարկային արտոնություններ, իսկ 10-րդ կետում ներկայացնել կազմակերպչական ծախսերի մանրամասն բացվածքը ըստ ծախսման ուղղությունների:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

ան 4/3

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ » ԲՀ կողմից իրականացվող «Բնակարաններ» ծրագրի մասին» նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| ... ծրագրի 8-րդ կետում նշել ժամկետը: | Դիտողությունն հաշվի է առնված, խմբագրված ծրագիրը կցվում է: |
| ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| ... ծրագրի 10-րդ կետը խմբագրել, մասնավորապես կազմակերպական ծախսերի մասով: | Դիտողությունն հաշվի է առնված, խմբագրված ծրագիրը կցվում է: |
| ՀՀ ՊԵԿ-ի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| ... ծրագրի 12-րդ կետում նշհել այն գործարքները որով ակնկալվում է ստանալ հարկային արտոնություն.<br>... ծրագրի 10-րդ կետը խմբագրել, մասնավորապես կազմակերպական ծախսերի մասով: | Դիտողությունն հաշվի է առնված, խմբագրված ծրագիրը կցվում է: |

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2012 թվականի N Մ - - Ա** ար. 4/4.1

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-2/ -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/ -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» (SPFA) բարեգործական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված սարքավորումների, ներկերի և լինոլեումի (106 տեղ, 18535 կգ ընդհանուր քաշով, 8100 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3000 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ար. 4/4.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.03.12 № 3/3.8-2/327

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.02.2012թ. N15/15.1/3450-12 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

[signature]

Ատոմ Ջանջուղազյան

024/7058-12

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

## ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱՆ 4/4.1

ԱԱ/3-6/2194-12
16.03.12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 15-ի համար 15/15.1/3450-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

ՊԿ/6669-12

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**--- ------------ 2012 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

ԱՆ 4/4.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 21-ի N 3/3.8-2/3369-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մարտի 20-ի N ՀՔ/22/2197-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 19-ի N ԱԱ/3-6/2262-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

